ներից և տեղերից, հիմնարկութիւններից և անձինքներից համակրական յայտնութիւններ են ստացվում դէպի չարագործի ընտրած զոհը: Մանաւանդ սաստիկ լսելի եղաւ այդ ատրճանակաձգութիւնը Կովկասի սարերի մէջ: Այնտեղից, որպէս պատասխան Կովկասի որդիներից մէկի դէմ ուղղված եղեղնական փորձի, հզօր խօսք լսվեցաւ, որ այժմ անցնում է Պետերբուրգի բոլոր շրջանների մէջ:

Կովկասեան հերոսների պատրիարքը, ծերունի իշխան Գրիգորի Դմիտրիևիչ Օրբելիանը, կարդալով Թիֆլիսի մէջ կոմս Լորիս-Մելիքովին սպանելու համար արած զործի մասին կարճառօտ հեռագրական լուրը, ուղարկեց Թիֆլիսից կոմսին հետևեալ հեռագիրը. «Հաստատ գնա դէպի մահ, պաշտպանելով ամբողջ Ռուսաստանի համար սուրբ գործը և Աստուած քեզ կօրհնի»:

Ինչպիսի խօսքեր և ինչպիսի մարդիկ: Կայսր Նիկոլայ Պավլովիչի սիրելին, անապատ-կուսելի պատուի տէր մարդը, պատերազմների մէջ դարձրված ծերունի զինուորը՝ հերոսական ողջոյն է ուղարկում Կովկասի որդուն, առաջարկելով արհամարհել մահը և խոստանալով նրան Աստուծոյ օրհնութիւնը: Մի առողջ և հզօր բան է լսվում այդ աղջոյնից: Նրանից փչում է Կովկասի ոգին: Ex Oriente lux: Երևի Կովկասից կը գայ մեզ տանջող չարիքներից ազատութիւնը: Այնտեղ մեզանից տարբեր կերպով դարձված մարդիկ կան. նոքա ուրիշ կերպ են մտածում, ուրիշ կերպ են զործում: Կովկասը միշտ եղել է մեր ամենալաւ զինուորական ուսումնարանը: Կովկասի զործիչները սրբութեամբ են պահպանում այդ բարձր ուսումնարանի աւանդները և նրանց բացատրում են մեզ կարճ, բայց մաքի կողմից հարուստ ձառերով: Իշխան Օրբելիանի լաւ հասկանալով կոմս Լորիս-Մելիքովի վրա դրած բեռի ծանրութիւնը, շտապում է նրան օգնել իր սուր խօսքով. «Հաստատ գնա դէպի մահ»:

Ռուսաստանը շատ բան տուեց Կովկասին: Կարծես հասաւ հատուցման ժամանակը և Կովկասը ընծայում է մեզ այնպիսի զործիչներ, որոնց մենք կարօտում էինք: Ամբողջ Ռուսաստանի սուրբ զործը պաշտպանելու համար Կովկասի որդին է կոչված և նա հաստատ գնում է դէպի մահ, յուսալով Աստուծոյ օրհնութեան վրա: Կովկասում սընված կոմս Լորիս-Մելիքովը, Կովկասի ոգով զարթնված և յենված այնպիսի կովկասցիների վրա, ինչպէս իշխան Օրբելեանի, Աստուծով դուրս կը բերի մեզ այն քարքարոտ ուղիից, որի մէջ խափվել ենք, և մեզ ազատ ճանապարհի վրա կը կանգնեցնի:

Կրկնում ենք. դա հեշտ զործ չէ: Դժուար խնդիր է: Ուրեմն իշխան Օրբելեանու նման օգնենք նրան, որին Թագաւորի կամքով վիճակվեցաւ այդ խնդիրը: Կովկասեան պատրիարքի հետ ասենք նրան մեր հոգու խորքից. «Հաստատ գնա դէպի մահ, պաշտպանելով ամբողջ Ռուսաստանի համար սուրբ գործը և Աստուած քեզ կօրհնի» և աւելացնենք մեր կողմից. «Աստուած քեզ կը պահպանի Ռուսաստանի համար....»

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Օդէսա, 20 փետրվարի

Օդէսայի օտարական հայերը վաղուց կամենում էին զցել իրանց լուսաւոր ազգի գանձանակի մէջ «Արարատեան» ընկերութեան համար փող ժողովելով, բայց խնդիրը տիվի պակասութիւնից յետաձգեցին մինչև որ «Մշակից» տեղեկացան Թիւրքիայի մանաւանդ Վանի հայերի անասելի դրութեան մասին սոսկի պատճառով: Այստեղ ինիցիատիվի սպասելն կատարեալ յանցանք կը լինէր մեր կողմից, որովհետև արդէն անգութ սովը սկսել է տանել իր զոհերը. ուրեմն ամենայն հայի պարտականութիւնն էր ինչքան կարելի է չուտով օգնութեան ձեռք հասցնել անբաղդ զոհերին սովի ճանկերից ազատելու: Ստորագրութիւնը բաց անելով այստեղի մեր վաճառականներից և գործակատարներից բաղկացեալ փոքրաթիւ հայերի մէջ, պէտք է խոստովանենք որ նրանք ուրախութեամբ ընդունեցին տառաջարկութիւնը և նուիրեցին իրանց կարողութեան չափ. ժողովեցաւ 125 բուբլի, որ և ուղարկում ենք «Մշակի» խմբագրութեանը ներփակեալ փոխանակագրով:

Ահա նուիրատուաց անունները՝ Բ. Շխեանց 10 բ., Ազգասէր ոմն 10 բ., Михаилъ Акоповъ 10 բ., Ղուկաս Մաղուլեանց 10 բ., Павелъ Кузановъ 10 բ., Տիգրան Տէր-Ստեփանեանց 5 բ., Ազամիրզեանց 12 բ., І. Хитаровъ 15 բ., Նիկիտ Թարայեանց 7 բ., Մ. Միրզայեանց 10 բ., А. Лелуа (грузинъ) 3 բ., Վարդան Խուդավերդեանց 3 բ., Նիկոլայ Դովլաթեանց 3 բ., Мгеброъ (грузинъ) 2 բ., Սերգէյ Մարքարեանց 3 բ., Առաքել Ունանեանց 3 բ., Կիւրեղ Սիմոնով 3 բ., Ա. Մատթէոսեանց 2 բ., Յովհաննէս Մեջարցակեանց 3 բ., Залиновъ 1 բ.: Ընդամենը 125 բուբլի ոլը խնդրեմ բարեհաճէք հասցնել ուր հարկն է: Ցոյս ունենք աւելի էլ ժողովելու:

Բ. Շխեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հեռագրում են, որ մարտի 2-ին այդտեղ սիրողների հայոց ներկայացումն կար յօգուտ թատրօնական ֆօնդի: Ընտրակներում օրիորդների մի խումբ երգեց ուղեկցութեամբ ֆուեթակի և ֆիսհարմոնիայի: Օրիորդ Տէր-Մաուքեան չատ լաւ երգեց «Մրմնջեռնակ» երգը: Դաշլիքը լի էր, չը նայելով որ եղանակը չատ վատ էր:

—

Ստացանք ՑԱՐԻՑԻՆԻՑ «Արարատեան» ընկերութեան տարեկան անդամներից 100 բուբլի: Անդամները սրանք են, որոնցից իւրաքանչիւրը 20 բուբլի է վճարել: Յովհաննէս Հախումեանց, Զաքարիա Կրասիլնիկեանց, Ազատի Զահմահսազեանց, Յակոբ Ղազանց և Գրիգոր Աւջեանց:

—

Ստացանք հետևեալ նամակը ԹԻՖԼԻՍՈՒՄ բընակվող դերձակ Գրիգոր Անեանից: Մեր գրված նամակի համաձայն որ տպված էր «Մշակի» 23-որդ համարում ուղարկում ենք ձեզ, պ. խմբագիր, ամսվայ մեր արդիւնքի 5% յօգուտ Վանի սովատանջների: Այդ գումարը կազմում է 10 բ. 50 կոպ.: խնդրելով հասցնել ուր հարկն է, յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում օրիորդ Ն. Տէր-Մարկոսեանցին, որը կարդալով մեր վերոյիշեալ նամակը յորդորել է մի քանի իր ծանօթ օրիորդներից իրանց հագուստները մեզ պատուիրելու: Նոյնպէս շնորհակալութիւն ենք յայտնում մեր բոլոր պատուիրողներին: Դերձակ Գրիգոր Անեան և դերձակուհի Շուշանիկ (Սանդուխտ) Անեան:»

—

Մենք թէև չատապում ենք ուղարկել յօգուտ Վանի սովեալների ստացվող նուիրատուութիւնները, բայց նիւթերի չատութեան պատճառով մեր խմբագրութեան մէջ, նուիրատուների ցուցակները աւելի ուշ են տպագրվում «Մշակի» մէջ, քան թէ նրանց նուիրած փողերը կ. Պոլիս են ուղարկվում:

—

Ստացանք ՑԱՐԻՑԻՆԻՑ յօգուտ Վանի սովատանջների 175 բուբլի: Նուիրատուների ցուցակը կայխատենք չուտով տպագրել: Բացի սորանից ստացանք նոյն քաղաքի հետևեալ անձինքներից 14 բուբլի նոյնպէս յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների՝ А. П. Ивановъ 10 բ., Я. З. Райкинъ (գրչ.) 2 բ., Извощиковъ 1 բ. և առաջին ցուցակի փոստի ծախսից աւելացածը 1 բ.: Ընդամենը 14 բ.:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ Մեծ Իշխան Կովկասեան փոխարքան առաջարկել է պետական խորհրդին Ցոյլ տալ Անդրկովկասում ընտրել պատուաւոր հաշտարար դատաւորներին, ցայտնի է որ այդ ընտրողական իրաւունքը վաղուց է արդէն վայելում են Ռուսաստանի ներքին գաւառները:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ բարձր յանձնաժողովի կառավարիչ, կոմս Լորիս-Մելիքով հրաւիրել է Ս. Պետերբուրգի քաղաքագլխին անդամ լինել պետական բարձր յանձնաժողովի և դիմել է մի և նոյն ժամանակ մայրաքաղաքի Դումային խնդրելով որ Դուման քաղաքային պատգամաւորներից երեք չորս մարդուն ընտրի և առաջարկի իրան, որպէս զի այդ ընտրվածներն էլ անդամ լինեն բարձր յանձնաժողովի: Դումայից բացի քաղաքագլուխ, բարոն Կորֆից, ընտրվեցան հետևեալ անձինքները՝ Դլազունով, Կավսս, Լիխաչեվ, Մատվեև, Միսկով, բարոն Ֆրէդերիկս, Սակոլով և Միասսեդով:

—

Միջազգային հեռագրական ընկերութիւնը այնքան խառն և անորոշ կերպով հաղորդեց բոլոր տեղական լրագիրներին մարտի 1-ին Ս. Պետերբուրգում ներքին փոխառութեան կատարված տիրաժի թւանշանները, որ մենք պարտաւորութիւն ենք համարում յայտնել մեր ընթերցողներին, որ բոլորովին պատասխանատու չենք մեր երէկվայ համարում տպված տարած դումարների թւանշանների համար:

—

Ստացանք ռուս բնագէտների և բժիշկների Ս. Պետերբուրգի VI ժողովից մի բրոշիւր հետևեալ

հիւրի հետ. Վրանի առջև կախած լապտերների լուսով երևաց, որ նրանք վաճառականներ էին և բեռ տանող չարվադարներ, որոնց մէկի արիւնաշաղախ գլուխը, միւսի թևքը, երրորդի մարմնի մի այլ մասը, փաթաթած էին, և արիւնը դեռ հոսում էր վէրքերից.

Բէկը լսելով դրսի աղմուկը, կանչեց ծառաներից մէկին և հարցրեց.

—Ի՞նչ է պատահել.

—Մի քանի վաճառականներ ձեզ մօտ խնդիրք ունեն, ասում են, թէ կողոպտեցին մեր քարվանը.

Ցհաճութեան Նման մի բան անցաւ բէկի ուրախ դէմքի վրա, բայց նա ծածկելով իր ներքին վրդովմունքը, հրամայեց կանչել կողոպտվածներին.

—Զարմանալի բան է, դարձաւ նա դէպի մուդիրը,—փիմ հողի» վրա երբէք այսպիսի անկարգութիւններ չեն պատահել, հիմա ինչպէս է եղել, որ կողոպտել են դրանց քարվանը.

Բէկը, սովորութիւն ունէր իր ցեղի բնակած երկրին իր հողը կոչել, թէև այնտեղ մի ափ հող անգամ որ և իցէ քրդի չէր պատկանում, այլ բոլորը անհաստատաբնակ բեյաների Նման թափառում էին մի տեղից միւս տեղ.

—Աւազակութիւններ ամեն տեղ պատահում են, պատասխանեց մուդիրը հանդարտութեամբ,—երկիրը առանց աւազակի չէ լինում. Երկրի մէջ էլ յայտնվեցան սատանաներ: Արզրում մէջ օր չէր անցնում, որ վաղի մօտ գանգատաւորներ չը դային.

Բէկը, խրախուսվելով մուդիրի չողոքորթութիւններից, ասաց.

—Հաւատացէք, մուդիր, չէյխի գլուխը վկայ լինի, որ ես այս կողմերը այնպէս եմ պահում, որ երկինքի թռչունն էլ համարձակ չէ կարողանում փիմ հողի» վրայով անցկենալ. Զարմանում եմ, որ սատանան պէտք է կողոպտած լինի այդ խեղճերին.

Ցայտնվեցան վիրաւորված և արիւնշաղախ վաճառականները: Նրանցից մէկը, որ փոքր ինչ առողջ էր, առաջացաւ և խօսեց.

—Ձեր ոտքերի փոշին համբուրելու ենք եկել, բէկ, վերևում Աստծուն ենք ճանաչում, ներքևում ձեզ. մարգարէի սիրոյ համար, օգնեցէք մեզ. խեղճ վաճառականներ ենք. մեր քարվանը կողոպտեցին, մեր ընկերներից չատերին սպանեցին, մնացածներին ձեր բարի աչքերի առջև տեսնում էք, վիրաւորված են, չատ չեն ապրի. Ամենը, ինչ որ ունէինք, տարան, ոչինչ չը թողեցին.

Վիրաւորվածները, չը կարողանալով իրանց ոտքի վրա պահել, նստեցին վրանի առջև, առողջները կանգնած մնացին.

—Ո՞րտեղ կողոպտեցին ձեզ, հարցրեց բէկը.

—Այստեղ, այստեղից ոչ այնքան հեռու լեռների մէջ կողոպտեցին մեզ. մեր քարվանը դուրս բերեցին ճանապարհից, քշեցին մի խուլ ձորի մէջ, այնտեղ մեր բոլորին կապկապեցին և ձգեցին մի փոսի մէջ, յետոյ սկսեցին հակերը ցրվել, ինչ որ լաւ բան կար, բոլորը տարան.

—Օրվայ որ ժամն էր.

—Կէսօրին մօտ էր. Մենք մինչև իրիկուն կապված մնացինք այն փոսի մէջ. Աստուծոյ ողորմութիւնը հասաւ, մեզանից մէկը քանդեց իր կապերը և մեր կապերն էլ արձակեց. թէ չէ, պէտք է մնայինք այն փոսի մէջ, և սովից մեռնելով, զազանների կերակուր դառնայինք.

—Դուք որտեղացի էք, քարվանը որտեղից էր գալիս և ուր էր գնում, չարունակեց բէկը իր հարցուփորձը.

—Ձեր ծառաները պարսկաստանցի վաճառականներ են. քարվանը բեռներ ընդունեց Տրապիզոնում, որ Պոլսից նաւով էին բերված. անցանք Արզրումից մինչև այստեղ անվտանգ, և պէտք է չարունակէինք մեր ճանապարհը, և Բայազէդից Պարսկաստան գնայինք, բայց այստեղ այս դժբախտութիւնը պատահեց մեզ. Մեր քարվանը բեռնաւորած էր ամենաթանգագին ապրանքներով. բայց ոչինչ չը թողեցին, ինչ որ տանելու էին, տարան, մնացածը այրեց ին.

—Շէյխի գլուխը վկայ լինի, որ այսպիսի բարբարոսութիւն ես առաջին անգամն է տեսնում, դարձաւ բէկը դէպի մուդիրը, որ հետաքրքրութեամբ լսում էր վաճառականների պատմութիւնը.

—Դուք կարողացաք ճանաչել աւազակներին, հարցրեց մուդիրը, ինքն ես հարցուփորձի մէջ մտնելով.

—Ի՞նչպէս ճանաչէինք, պատասխանեց խօսող վաճառականը. — բոլոր աւազակների երեսները կապած էին, միայն աչքերն էին երևում. Եւ երբ մեզ բռնեցին, մեր աչքերն էլ կապեցին, յետոյ սկսեցին ապրանքները բաց անել: Բայց այդքանը տեսանք, որ քրդեր էին.

—Բանի հոգի կը լինէին, դարձեալ հարցրեց մուդիրը.

Ցիսունի չափ.

—Դէպի որ կողմը գնացին.

—Մենք տեսնել չը կարողացանք, ասեցի, որ մեր բոլորի աչքերը կապած էին, և մեզ ձգել էին մի փոսի մէջ, ձեռներից և ոտներից նոյնպէս կապված.

—Բաւական է, մէջ մտաւ բէկը բարկութեամբ ընդմիջելով մուդիրի հարցուփորձը,—ես բոլորը հասկացայ.

Ցետոյ նա դարձաւ դէպի վաճառականները.

—Հիմայ գնացէք և հանգստացէք, եթէ աւազակները մեր կողմերի քրդերից լինեն, ես կաշխատեմ անպատճառ գտնել նրանց և ձեր մի չօփը (հիւղը) չի կորչի: Իսկ եթէ ուրիշ կողմերից եկած լինեն, այն ես կարող եմ ցոյց տալ. դուք անհոգ կացէք, ես չեմ ներում որ «փիմ հողի» վրա անիրաւութիւններ գործվեն.

Վաճառականները գլուխ տուեցին, և սկսեցին օրհնել բէկի կեանքը.

—Կրպա, դարձաւ նա իր ծառաներից մէկին,—տար այդ մարդերին քո վրանը և պատվիր, որպէս արժան է պատուել Աստուծոյ հիւրերին. չուտով կանչիր բժշկին, որ դրանց վէրքերը դարմանէ. քեզ եմ յանձնում, եթէ գանգատվելու լինեն, ձեռքիցս չես պրծնի.

Վաճառականները կրկին օրհնեցին բէկի կեանքը. կրկին գլուխ տուեցին և հեռացան.

Նրանց հեռանալուց յետոյ բէկը դարձաւ դէպի իր հիւրը այս խօսքերով.

—Ցեսնում էք, պատուելի մուդիր, ահա այսպիսի դէպքեր են պատահում, եկ դու հիմա իմացիր, թէ որ սատանան է տարել դրանց ապրանքները. ես հաւատացած եմ, որ աւազակները մեր կողմերի քրդերից չեն լինելու. Ես սաստիկ պատժում եմ աւազակներին. իմ երկիրից ոչ ոք չի համարձակվի այսպիսի բան անել: Բայց գալիս են զանազան տեղերից, շատ անգամ Պարսկաստանից, և մեր կողմերում աւազակութիւն են անում. Ո՞վ կարող է ճանաչել, երբ պարսիկը քրդի հագուստ է հագնում. Այդ չատ անգամ պատահում է և մեզ գլխացաւանք է պատճառում. Այսուամենայնիւ, ես պէտք է աշխատեմ, գուցէ ինձ կը յաջողվի բռնել տալ աւազակներին.

—Ամէն, դարձաւ նա իր հօրեղբօր որդուն, որ ամբողջ ժամանակը այնտեղ լուռ նստած էր.—այս բօսկիս կը վեր առնես քեզ հետ քանի ձիաւոր մեր քաջերից, նախ քարվանի կողոպտված տեղը կը գնաս, աւազակների ձիաների հետքերը կը հետազօտես, և չրջակայ հովիւներից հարցուփորձներ կանես, մի խօսքով, ամեն հնարք գործ կը դնես գտնելու չարագործներին. քեզ իրատներ պէտք չեն, դու այդ բաները լաւ ես իմանում: Ես չեմ ների, որ «փիմ հողի» վրա մարդիկ կողոպտէին. դա իմ անուանը պակասութիւն է բերում.

Ամէն գիշերով ճանապարհ ընկաւ կատարելու բէկի հրամանները.

—Ամէն չան հոտառութիւն ունի, եթէ աւազակները շատ հեռու գնացած չը լինեն, անպատճառ կը գտնի, խօսեց բէկը.

—Երևում է....պատասխանեց մուդիրը խորհրդաւոր ձայնով.

Արդէն գիշերից բաւական անցել էր. բէկը հրամայեց ընթրիք տան, կերան, խմեցին, յետոյ բարի գիշեր և հանգստութիւն մաղթելով իր հիւրին, նա խոստացաւ, որ առաւօտեան ճանապարհ կը դնէ մուդիրին, իսկ ինքը գնաց իր վրանը քնելու.

Բայց մուդիրը երկար անքուն մնաց և ինչ որ բանի վրա մտածում էր....

(Կը շարունակվի)

վիրնագրով «Докладъ комиссіи желѣзнодорожныхъ врачей» (երկաթուղու բժիշկների յանձնաժողովի զեկուցում)։

—

Ստացանք ԹԻՖԼԻՍԻՄ (Հ. Լենֆիաճանցի տըպարանում) տպված երգերի մի փոքրիկ ժողովածու հայերէն լեզուով. Ժողովածուն հետևեալ վերագրիչ է կրում «Տաւիղ Ցիսնաղի», հեղինակուՄիւն Թէրլեանի։

—

«ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» հիմնողները և այն անձինք, ովքեր ցանկանում են ընկերութեան անդամ լինել, համաձայն Բարձրագոյն իշխանութիւնից նորահաստատ կանոնագրութեան § 29, հրաւիրվում են ընդհանուր ժողովին, պաշտօնական անձանց ընտրութեան համար։ Ընդհանուր ժողովը լինելու է կիրակի օրը, մարտի 9 ին, առաւօտեան ժամը 11-ին, Արծրունու թատրոնի դահլիճում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Ինչպէս արդէն ծանուցած էինք, Արարատեան, Դպրոցասիրաց—Արևելեան և Կիլիկեան ընկերութիւնք, իւրաքանչիւրն իրենց ղրկին մասնաւոր նիստերու մէջ՝ ընդունեցին միացման սկզբունքը։

Իսկ անցեալ կիրակի 10 փետր. Արարատեան ընկերութիւնն ընդհանուր ժողովի մասնակցելով, երեք ընկերութեանց անդամներէ կազմուած մասնաժողովի մը կողմանէ միասնական միութեամբ պատրաստեալ ապագայ Միացեալ ընկերութեան կանոնագրին և միացման տեղագրեալ պայմանագրութիւնը քուէի դրնելով 3/4-ի մեծամասնութեամբ երկուքն ալ ընդունեց։

Հետևաբար Արարատեան ընկերութիւնն իւր կողմանէ միացման խնդիրը բոլորովին կարգադրած վերջացուցած է։ Ցուսամք թէ Դպրոցասիրաց—Արևելեան և Կիլիկեան ընկերութիւնք ալ իրենց յառաջիկայ նիստերուն մէջ նմանօրինակ որոշմամբ վախճան կուտան միացման խնդրոյն, որպէս զի վաղ ընդ փոյթ գործադրեն։

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 16 փետրվարի

Եւրոպական աշխարհավարութեան փոփոխութիւններն և նոր դաշնակցութեանց կազմուելու հաւանականութիւնը մեզ համար մեծ կարևորութիւն ունին, և մեր դիւանագէտներն, թէպէտ արտաքին մէջ Նորավարժ, բայց յուսամք թէ չը չուարին, չը չփոթին։ Թուրքիա Ռուսիոյ յարելու նշաններ ցոյց կուտայ և Անգղիա քաղաքական նոր ուղղութիւն մը ունենալու պէտքը կը զգայ և յանուն բարեկարգութեանց իւր նպատակին հասնել կը յուսայ։ Մէկ քանի օր առաջ պ. Սանտիսրն Անգղիոյ և պ. Թէսթա Գերմանիոյ դեսպանատան կողմանէ Պատրիարքի հետ երկար տեսակցութիւններ կունենան, և կարծեմք թէ Բերլինի վեհաժողովէն ի վեր առաջին անգամն է որ Ներսէս սրբազանը այսքան կարևորութիւն ունեցող այցելութիւններ կընդունի։ Հայոց խնդրոյ նկատմամբ երկու դեսպանատուններն իրենց կառավարութիւններէն նմանօրինակ հրահանգներ կընդունին և կը հաղորդեն Պատրիարքի։ Հաւանական է որ Հայաստանի ինքնավարութեան խնդիրն ապագային վերապահուի և Պատրիարքարանը առայժմ այնպիսի բարեկարգութիւններ պահանջէ, զորս Բ. Դուռը չախորժելով հանդերձ մերժելու միջոց մը չը գտնէ։ Գերմանիա Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի և Անգղիա յունիս 4-ի դաշնագրի զօրութեամբ կարծեմք պիտի պահանջեն Բ. Դռնէն որ ընդունի և գործադրէ բարենորոգմանց մասին Հայոց Պատրիարքարանի նոր առաջարկութիւններն։ Հաւանական է որ Հայաստանի համար եթէ ոչ հայ, գէթ քրիստոնեայ կառավարչի մը ընտրութիւնը ապահովեն պահանջեն Բ. Դռնէն։ Շատ զգոյշ շարժելու ժամանակ է և յուսալի է որ ապագայն գէշ չը լինի։

Պատրիարք սրբազանը այցելութիւն տուաւ Աւստրիոյ նոր դեսպան Ցուպօքի և մէկ ժամն Աւստրիոյ նոր դեսպան Ցուպօքի և մէկ ժամն աւելի տեսակցեցաւ։ Թուի թէ Աւստրիա Թրքաց աւելի տեսակցեցաւ։ Թուի թէ Աւստրիա Թրքաց բարեկամ ձևանալու պատճառներ ունի։ Ցուպօքի բարեկամ ձևանալու պատճառներ ունի։ Ցուպօքի երբեմն Պարսկաստան դեսպան եղած լինելով, Հայաստանի վրայ տեղեկութիւններ ունի և ըսեր է Պատրիարքին թէ Հայաստանէն անցած ժամանակ հայոց ազգատներուն վրայ եղած է, բայց թիւրք կառավարութեան տարութիւնն է միայն որ չը ներեր նմա քիւրտերն զսպել։ բայց պատասխան կընդունի թէ՝ Դուռը քիւրտերը զսպելու համար ինքզինքն տկար կը յայտարարէ, բայց Զէյթունի վրա բանակներ խրկելու միջոցին այդ տկարութիւնը զօրութեան կը փոխուի։

Զէյթունի հարցը թէպէտ և ամեն կէտերու մէջ գոհացուցիչ լուծում գտած է, բայց Դուռը վերջին պահուն հայ կառավարչի մը ընտրութիւնը կը մերժէ և կը խրկէ թիւրք կառավարիչ մը, որոյ ամենէն փոքր թերութիւնը վերջին աստիճան գինեմոլ լինելն է։ Զէյթունցիք չատ զժգոհ են և կարծեմք թէ Դուռը նորանոր դժուարութեանց պատճառ։ Կիլիկիոյ բարեկարգութեանց յանձնաժողովոյ հայ անդամ Նուրեան Պէյիս եկաւ, անցեալ օր Պատրիարքի ներկայացաւ և կերևի թէ բաւական կծու խօսքեր լսած լինի։

Անգղիոյ խորհրդարանին մէջ ալ պ. Պուրք չը խնայեց երբեմն Հալէպի կառավարիչ Բեամիլ բաշան, որ Զէյթունի հարցի առթիւ բոլորովին անուանարկ եղաւ։ Այս ապիրատ անձին վրայ պէտք եղածն գրած ենք «Մշակի» մէջ։ Պ. Պուրքի խիստ քննադատութիւններն լաւ տպաւորութիւն մը բրին հայոց վրայ, բայց զարմացմամբ տեսանք որ «Լէվանտ-Հերալտ» յանկարծ ներբող մը սկսաւ հրատարակել Բեամիլի վրայ, ներկայացնելով զնա առաքինի և հանճարեղ պաշտօնեայ մը որ մեծ անիրաւութեան մը զոհ կը լինի։ «Լէվանտի» յօդուածը հոս նշանակութիւն չունի, վասն զի ամենք Բեամիլը կը ճանչէ, բայց այդ թերթը Անգղիա չատ տարածուած է և այնտեղիներն կրնան հաւատ ընծայել։ սակայն Նոր Կապոյտտերը կըսեն թէ Բեամիլի նպաստաւոր լինելէ չատ հեռու է։ Կապոյտ տերին կ. Պոլիս հասնելուն կը սպասեմք, կը զրուցուի թէ հայոց վերաբերեալ կարևոր գլուխները կը պարունակէ։ Այլև Հայաստանի անգղիական հիւպատոսներէն Լէյարդի ընդունած նոր տեղեկագիրներն հայոց համար աւելի նպաստաւոր լինել կը կարծուի։ Հիւպատոսները կաչխատեն, «Թերճեմանի» թղթակիցն կը հաղորդէ, թէ Բէյլթն սկսած է յարաբերութիւններ հաստատել վասպուրականի կողմերն գտնուած ասորիներու հետ, և թէ քաղաքական դիտումներ ունի։ Այդ ասորի ժողովրդեան վրա մեր ստացած տեղեկութիւններն հետեւեալներն են։ Վանէն 4 օրի չափ հեռի Ջուլամերիկ մօտ Ցիսթի և Ցուխոպի լեռներուն վրա հին ասորական ազգի մնացորդ ժողովուրդ մը կը բնակի, որ ամեն ինչ կորուսած է, բացի իւր նախնեաց քաջասրտութիւնէն։ Այդ ժողովուրդը կիսավայրենի վիճակի մէջ է, կառավարութեան կանոնաւոր տուրքը չը վճարեր և յաճախ նեղութիւններ կը պատճառէ. կառավարութիւնը յարմար չէ սեպած մեծամեծ ծախքեր ընելով այդ ժողովուրդը բոլորովին լուծի տակ ձգել։ իրենց կրօնական և զինուորական պետն Մար-Շիմոն կը կոչուի։ Մար-Շիմոն մի և նոյն ազգատոհմէն կընտրուի միշտ. նա որոշված է Մար-Շիմոն լինել երբ դեռ իւր ծնողքի արգանդին մէջն է։ Մայրն յղի եղած ժամանակ միս չուտեր։ Մար-Շիմոն լինելիք տղան երբէք միս չուտեր իւր կեանքի մէջ, մարշիմոնցուն այժմ 18 տարեկան կայ և հաւանական է որ, եթէ ուզենք մեր վարժարաններու մէջ կրթել ապագայ Մար-Շիմոնն, ասորի ժողովուրդը հաւանութիւն պիտի տայ։ Այդ ժողովուրդը հայերը իրեն բարեկամ և պաշտպան կը նկատէ և արդի Մար-Շիմոնն ալ չատ բարեկամ է հայոց։ Բողոքականներն այս ժողովրդի մէջ բողոքականութիւն տարածել աշխատած են, մէկ ազգքաստիկ տղայ իրենց վարժարանին մէջ կրթելով հոն դարձուցեր են, բայց իրենց նպատակին չեն հասած։—Անչուշտ կը տեղեկանամք հետզհետէ Բէյլթնի դիտաւորութիւններն։ Բայց առ այժմ Վանեցիք ուրիշ կենսական խնդիր ունեն իրենց միտքը գրաւելու, հացի խնդիրն, թանգութիւնը սաստիկ է. Կ. Պոլսոյ խնամատար կենտրոնական յանձնաժողովը լաւ կաշխատի, հաւանօրէն մօտ 30,000 ռուբլի հաւաքէ։ Ցեղոյս հայ և եւրոպացի թերթերն գովեստներով գրեցին, թէ Տփխիսէն 15,000 ռուբլի եկած է Յանձնաժողովոյ. մեք այս լուրը կանխահաս համարեցինք և արդարև քանի մը օր վերջը այդ թերթերը գրեցին թէ այդ գումարը պ. Սանասարեանցի խրկած 1500 ռուբլին է, ինչպէս նաև մի ուրիշ պարոն 500 ռուբլ նուիրած է. անչուշտ մինչև հիմա դուք ալ ձեռն ի բան գործ արկանէք։ Սուտ Պայազէտի, Աղաչկերտի կողմերն ալ արդէն տիրած է և երէկ երեկոյ Անգղիոյ դեսպանի ընդունած հեռագիրներէն կիմացուի թէ Տիգրանակերտի կողմերն ալ երևան եղած է այդ սուտը. գիւղացիներն քաղաք կը թափեն և մեծ խեղճութիւն կը տիրէ։ Մեք չեմք կարծեր որ կառավարութիւնը օգնութիւն ընելու փոյթ ունենայ։ Կ. Պոլսէն, քանի մը քիլոմէթրօ հեռաւորութիւն ունեցող Իզմիտի մէջ մեծ խեղճութիւն և թանգութիւն կայ։ Պատրիարքի թախանձանաց վրա Դուռը որոշեց որ 2000 քիլէ ցորեն բաժնուի ժողովրդին, բաւական ատեն անցաւ և տակաւին ոչ մէկ գործադրութիւն չէ եղած։ Եթէ կառավարութիւնը չատ թոյլ կը չարժի անօթի ժողովուրդը խնամելու մասին, սակայն չատ մեր է երբ Պատրիարքարաններն հարուստել ուզէ։ Գրած ենք թէ որչափ դժուարութիւններ եղած են կալուածական վկայագիրներու խնդրոյ մասին և Բ. Դուռը զիջաւ Պատրիարքարանաց պահանջմանց. բայց այժմ նոր որոշում կուտայ, որով անցագիրներու և կալուածոց վկայագիրներն այսուհետև թաղապետութիւնը ուղղակի ինքն պիտի տայ։ Մեր Պատրիարքարանը տարին առ նուազն 1000 լիրա օսմանեան կառնէր այս վկայագիրներէն և անանք որ ազգային տուրքերնին չեն վճարած, երբ այսպիսի գործերով Պատրիարքարան կերթային, ստիպեալ կը վճարէին իրենց պարտքը և մօտ 1500 ոսկի այդ ապառիկներէն կը կայանար, այժմ ասանք բոլորն ալ վերջացան, և Պատրիարքարանի դրամական վիճակը որ արդէն չատ նախանձելի չէր, բոլորովին կը վատթարանայ. միւս Պատրիարքարաններն ալ այս վիճակի մէջն են։ Ներսէս Սրբազան Բ. Դրան դիմեր է և խնդրեր է որ կամ եկամուտի նոր ազբիւր մը ցոյց տան, կամ Պատրիարքարանի ծախսերը կառավարութիւնը հոգայ, մանաւանդ որ այդ վկայագիրներու հասոյթէն մեծ մաս մը հիւանդանոցի կը տրուէր։ Պատրիարքը կասէ թէ՝ Կիլիսանէի 1856-ի Հաթթը-Հիւմայիւնը կը տրամադրէ թէ Պատրիարքարաններու ծախսերն կառավարութիւնը պիտի հոգայ, վերջէն կառավարութիւնը վկայագիրներու հասոյթներն Պատրիարքարանաց ձգեց, որպէս զի այդ ծախսերն գոցեն. այժմ որ տուած իրաւունքն ետ կառնու, պարտաւոր է Բ. Դուռը կամ կանխիկ դրամ վճարել, կամ հասոյթի նոր ազբիւր մը ցոյց տալ։ Խնդիրն այս վիճակի մէջն է, միւս Պատրիարքարաններն մերինին կը հետեւին։

Սակայն երբ կառավարութիւնը նկատելով որ հայոց Պատրիարքարանը փոխանակ իրեն գործիքը լինելու ընդհակառակն ընդդիմադիր մաս մը կը ներկայացնէ, հետևաբար նիթապէս զայն կուզէ հարուածել, որպէս զի ուզածին պէս չը գործէ, միթէ մեք պարտաւոր չեմք խելքերնիս գլուխնիս ժողվել և օգնել այն պաշտօնատեղոյն, որ աշխարհի առաջ հայոց մեծամասնութիւն մը կը ներկայացնէ։ Մեր ազգային ժողովին պարտականութիւնն է այս հարցի վրա մտածել, բայց ազգային ժողովն ալ անմխիթարական տեսարան կընդայէ. ներքին գործերնիս չատ գէշ է. վերջերս դարձեալ ժողովը մը գումարեցաւ, դարձեալ ապարդիւն, կան խել մը առաջարկութիւններ որ օգտակար պիտի լինեն եթէ լուծուին, բայց եղած առաջարկութիւններէն որը լուծում գտած է։ Մեք ալ գործ մը կատարելու համար ամենէն դժուար ճանապարհն որն է զայն կընտրեմք. օրինակի համար իսկզբանէ անտի Ազգ. ժողովը Ղալաթիոյ Լուսաւորիչ եկեղեցին կը գումարուէր, որ մեծ դիւրութիւն կընծայէր ժողովականաց, կեդրոն տեղ մ'է. միայն հանդիսաւոր նիստերն Բում-Քապու մար եկեղեցին տեղի կունենային։ Այժմ չեմք գիտեր թէ երկրորդական պատճառներով. ժողովը միշտ Գում-Քապու կը գումարուի, այնպէս որ Կ. Պոլիսէն և Ղալաթիայէն Բում-Քապու երթալ և վերադառնալու համար գրեթէ մէկ ու կէս ժամ պէտք է, և մեր ժողովականներն, որոց մէջ սեղանաւորներ, վաճառականներ բաւական կը գտնուին, դժուարութեամբ կերթան մինչև հոն, մինչ Ղալաթիոյ եկեղեցին առաւելն մէկ քառորդի խօսք է։ Անցեալ նստին մտածեր են որ ստէպ բացակայ եղող երեցփոխանաց դէմ խիստ միջոցներ գործածեն, բայց թող գործը նախ դիւրացնեն։ Նշանաւոր երեսփոխաններն չատ անգամ չեն երթար, և անոնք որ իրենց բարոյական ազդեցութեամբը ժողովի լաւ ուղղութիւն մը պիտի տային լաւած են. Օտեանի ձայնը վաղուց է չեմք լսած, Քաղաքական ժողովը բարի, բայց գործելու չատ կարող չեղող անձերէ կազմուած է. միւս տնտեսական, ուսումնական, վանական և այլն խորհուրդներն համարում չեն վայելեր. կրօնական ժողովոյ մեծամասնութիւնը քանի մը նորատի, և քանի մը հինցած վարդապետներէ ու տէրտէրներէ կազմուած է։ Եթէ երեսփոխանական ժողովը արիութեամբ գործելու սկսի, լաւ ժողովներ կազմէ և կանոնաւոր կերպով ներքին բարեկարգութեանց տքնի, չատ մեծ գործեր կրնայ տեսնել. վախեմ թէ փափագնիս միայն փափագ մնայ, և արտաքին քաղաքական հարցերով լոկ զբաղիմք ու մխիթարուիմք։ Բայց քաղաքական հարցերն ալ դրամ կը պահանջեն. այսօր կիմանամք թէ Պատրիարքը կարևոր գործոց համար որ ազգին պատիւ պիտի բերէ և օգտակար լինի, կը փափագի պատգամաւորութիւն մը խրկել, այս չատերուն ալ փափագն է, բայց փող չը կայ մեզ ուտելու, ուստի լռելու է։

Քաղաքագիտական պատշաճութեանց Ներսէս սրբազան պակասաւոր չը գտնուիր, Ռուսիոյ կայսեր ընտանեաց դէմ Զմեռնայի պալատի մէջ եղած եղեռնագործութիւնը երբ իմացուեցաւ, սրբազանը անմիջապէս հետևեալ հեռագիրն ուղղեց առ կայսրն ուղղակի, առաջ դեսպանատան միջոցաւ կը հեռագրէր.

«Առ Նորին Կայսերական Վեհափառութիւնն ամենայն Ռուսաց—Սանկտ-Բէթերպուրգ։

«Ցէր Ազբայ,

«Թարգման միօրինակ զգացմանց Թուրքիոյ հայոց, փութամ զեղուլ զՎերմագին մաղթանս յոտս կայսերական գահուն վասն պահպանութեան թանկագին աւուրց Ձերումդ կայսերական Վեհափառութեան և Նորին Մեծապայծառ ընտանեաց, որոց ակներև պաշտպան է վերին Նախախնամութիւն։»

Ստորագրեալ Ներսէս պատրիարք հայոց Թուրքիոյ։

Միւս օրը իշխան Կորչաքոֆ կայսեր կողմէ հետեւեալ հեռագրով Պատրիարքին պատասխանեց,

Առ Բարձրաշնորհ Ցէր Ներսէս Պատրիարք Թուրքիոյ հայոց.

Նորին կայսերական Վեհափառութիւնը ինձ յանձնեց իւր շնորհակալութիւնը յայտնել Ձեր Սրբազնութեան յանուն Թուրքիոյ հայոց Նորան արտայայտած զգացմանց մասին։ (Ստորագրեալ Կորչաքոֆ)

Թէրճէմանը-Լիֆթեարի դատաստանը առ կախ մնացած է. Բ. Դուռը խստիւ արգելած է այս առթիւ մեր թերթերու Հայաստանի նկատմամբ ժողովուրդը յուզող յօդուածներ գրել, հետեւաբար մեր խմբագիրներն հարստահարութեանց վերաբերեալ նամակներ հրատարակելէ զզոյշ կը կենան, սպասելով «կարմիր տետրի» միւս թիւերուն։ Առաջին նախարար Սիդ բաշա հրամայեր է մաքսատան որ «Մշակ», «Մեղու» և «Փորձ» երբ մաքսատունը դան առանց քննելու իսկ վար դընեն։ Մինչև հիմա այդ անօգուտ խստութիւններն Տփղիսէն եկած թերթերու վրա չէին բանեցներ, երևի թէ դուք ալ կառավարութեան երկիւղ ազդուներէն սկսած էք լինել։ Մեք ալ ջանամք քիչ մը ատեն գրական հանդարտ նիւթերով զբաղիլ. Գարագաշեանի «Քննական Հայոց Պատմութիւն» հրատարակուեցաւ և մեծ ընդունելութիւն կը զտնէ. անցեալ մայիսի մէջ այս գրքի յառաջաբանը և մէկ հատուածը «Մշակի» մէջ հրատարակեցինք պէտք եղած տեղեկութիւններով. լուրջ գիրք մը որ մեր ազգային պատմութեան Հայկազանց հարստութեան վրա կարևոր քննադատութիւնը կը պարունակէ, խորենացւոյ պատմութիւնը վաւերական չընդունիր։ Այս քննական պատմութեան համառօտութիւնը ընելու միտք չունեմ, բայց կարծէ որ հայոց պատմութեան հետամուտ ամեն հայ ուշադրութեամբ կարդայ. Կ. Պոլսոյ մէջ քիչ և չատ ուսեալ դասուն այս աւուր գրական խօսակցութեան առարկայն է, բայց չատ հաւանական է որ այս քննական պատմութիւնն ալ խիստ քննադատութեանց հանդիպի։

Ուրիշ կարևոր հրատարակութիւն մ'ալ պ. Նուբար Բիւզանդացւոյ բառգիրքն է. այս ընդարձակ գործին վրա ալ գրած եմք։ Առաջին տետրը հրատարակուեցաւ, սակայն հեղինակը դրամի պէտք ունի գործը ի գլուխ հանելու համար. Կ. Պոլիս ազգային երեկլիներէ յանձնաժողով մը կազմուեցաւ պէտք եղած դրամն հայթայթելու համար, մի նշանաւոր Պանքիէ Սամանճի Մոմճեան գանձապահ ընտրուած է, քիչ չատ փող հաւաքուած է և գործը փութով յառաջ պիտի տարուի։ Բայց ցաւալի է որ թէ Կ. Պոլիսի և թէ Ռուսիոյ հայերն դեռ պէտք եղած աջակցութիւնը չեն ըրած։ Ահաւասիկ երիտասարդ մը որ իւր ամբողջ կեանքը մագաղաթներու մէջ մատեցուցած, հայ լեզուի ճոխութիւններն փոյներու մէջ է վեր կը հանէ, մեր լեզուին կը մատուցանէ ծառայութիւն մը զոր քիչերն կարող են մատուցանել, հեղինակ մը որ իւր պատասխանատուութեան մեծութիւնը ըմբռնած է, և ահա կրօնամոլ կամ պորտաբոյծ վանքերն կը մերժեն իրենց մամուլներն բառգրքի մը հրատարակութեանը, զրագէտներն և կարողութիւն ունեցողներն անտարբեր կը կենան, և հեղինակ մը, տաղանդաւոր երիտասարդ մը, որ իւր արժանիքը ճանաչելով խոնարհել չախորժեր, սակաւաթիւ բաժանորդներ կը գտնէ, 20 տարիներու անընդհատ աշխատութեանց երկունք այս մեծ գործին համար աշխարհս վրա 15 ռուպլի տուող 400 հայ չը գտնուի !! և դեռ գուշեմք թէ հայ լեզուն ազգի պահպանութեան էական տարրերներէն մին է։

Հայկակ

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ